

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

Խմբագրութիւնս ընդունեցաւ Ամենապատ. Սրբազան Տ. Տ. Մատթէոս Իգմոր-
լեան Պատրիարքէն՝ հետեւեալ սրտառուչ հրաւերը ի նպաստ հայ սովելոց՝ զոր սի-
րայօժար կը հրատարակենք:

Պատուական Մերազնեից որ ի Մայրաքաղաքս և ի սփռած թուրքիոյ և Արտասան-
մանի, ողջոյն Տիրառանց և օրհնոսրիսն երկնապարզն

Հայաստանի զանազան գաւառները և կիլիկիոյ այլ և այլ կողմերը ժողովրդ-
դեան կարօտութիւնը իր ծայրագոյն աստիճանին հասած է, և համատարած սովը՝
լեցնելով ընկճուած ու ջախջախուած ժողովրդեան թշուառութեան չափը՝ սկսած
է նախճիրներ գործել, մանաւանդ ձմրան այս սաստկաշունչ եղանակին երբ հե-
ռագիրն ու թղթաբերը ամէն օր ամէն կողմէ կը հասցնեն մեզ սովալլով բազ-
մութեան օգնութեան աղաղակները, ողբազին կոծերն, օրհասականի հռնդիւնին
պէս աղեխարշ և կը գուժեն կեանքերու կորուստը, որք յառաջ կուզան անսուա-
ղութեան հետեանօք: Ազգային պատրիարքարանը նպաստից Յանձնաժողովոյ մի-
ջոցաւ թէպէտև ամէն միջոց ձեռք առած է դարման տանելու այս դառն կացու-
թեան և սպառնացող մեծ վտանգին, թէպէտև մեր ողորմածաւոր ժողովուրդը
անտարբեր չը հանդիսանար այս ծանր աղէտին ու կը կարկառէ իր օգնութեան
ձեռքը, փութացնելով սիրայօժար իր նպաստի ու ողորմութեան լուծայն, բաւա-
կան չըլլար ան՝ մեղմացնելու չարիքը ահաւոր աղէտին որ կ'սպառնայ գոյութեան
տարաբաղդ կեանքերու, որք յոյժ ստուար են թուով:

Իբրև հայր հասարակաց կը փութամ պարզել կացութիւնը մեր բարեպաշտ
ժողովրդեան և այս կոչը կ'ուղղեմ անոր ամէն դասակարգի անդամներուն ան-
խտիր, խնդրելով որ ամէն ոք՝ վաճառական թէ խանութպան, արհեստաւոր թէ
մշակ, իր զգացման ու կարողութեանը չափով, բերէ ընծայէ մեզ իր ձեռնտու-
թիւնը՝ իր օգնութեան լուծման, որ սահմանուած է կեանքեր խլելու թշուառու-
թեան ու մահուան ճիրաններէ, դիմազրաւ կենալու մեծ աղէտին:

Յուսալից ենք որ մեր սիրեցեալ ու պատուական ժողովուրդը՝ որ ի Տաճ-
կաստան, ի Ռուսիա, ի Հնդկիս, ի Պարսկաստան, յ'Ամերիկա, յ'Եւրոպա և այ-
լուր, կ'ընելով աղէտին մեծամասնութիւնը, անոր անդարմանելի հետեանքներն և
մեր վրայ ծանրացող պարտականութիւնը, յօժարակամ սիրով պիտի պատասխանէ
մեր կոչին և գործնականապէս ցոյց տայ այն գործալից սէրն ու համակրանքը,
զորս կը տածէ մեծապէս առ իւր տառապեալ և օրհասական համարիւն եղբայր-
ներն և առ Ազգն համօրէն:

Կ'օրհնենք համայն նուիրատուներն և կը հայցենք որ նախախնամողն Տիե-
զերաց, Պարգևիչն բարեաց ի հաճոյս իւր ընդունի անոնց զուարթառատ տուրքը
ու ողորմութիւնը և լնու զիրենք բեղուն բարեօք և մշտտեւ բարօրութեամբ:

Աղօթարար Պատրիարք Կ. Պոլսոյ

ՄԱՏԹԷՈՍ ԱՐԲԵՊ. ԻԶՄԻՐԼԵԱՆ